ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"__3__" հոկտեմբեր 2012թ. № 121 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ << ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մարտի 20-ի N 194-Ն ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012թ. մարտի 24-ի N 5-Ն և այլ շահագրգիռ գերատեսչությունների համատեղ հրամանի պահանջների **ո ր ո շ ու մ եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում <<Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթի կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել մրցութային մարզային հանձնաժողովի անվանական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Մրցույթի մարզային փուլի ժամանակացույց սահմանել 2012թ. հոկտեմբերի 3-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ:

4. Հանձնաժողովին՝ ամփոփել մրցույթի արդյունքները և որոշել հաղթողներին ու ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից հաստատված համապատասխան

արձանագրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

5. Հանձնաժողովին մինչև ս.թ. նոյեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչություն ներկայացնել մարզային փուլում հաղթած նախնական զինվորական պատրաստության ուսուցիչների և քաղաքացիական պաշտպանության շտաբի պետերի գործերը:

6. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 3
ք. Կապան